


Հաստատված է «Ակտինա Կապիտալ»
Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերության
Արտահերթ Ընդհանուր Ժողովի Նիստի
Թիվ 2026/03/23-1 Արձանագրությամբ
Տնօրենի ժ/պ՝ Սերգեյ Գալոյան



«ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ, ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ
ՈՋՆՉԱՑՄԱՆ ԶԵՆՔԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ»
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խմբագրության համար	Հաստատման ամսաթիվ	Ուժի մեջ մտնելու ամսաթիվ
1.2	23.03.2026	23.03.2026

2026թ
ԵՐԵՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	2
1.1. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	2
1.2. ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ	3
ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ	9
ԳԼՈՒԽ 2. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ	10
2.1. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին և գործադիր մարմնին ներկայացվող նվազագույն պահանջներ	10
2.2. Ներքին դիտարկումների մարմնի պարտականություններն ու լիազորությունները, ՆԴՄ ներկայացվող պահանջները.....	11
3. ԳԼՈՒԽ 3. ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄ ԵՎ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ.....	14
4. ԳԼՈՒԽ 4. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐ	16
5. ԳԼՈՒԽ 5. ԳՈՐԾԱՐՔԸ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԿԱԾԵԼԻ ՈՐԱԿՈՒՄԸ, ԴՐԱՆՑ ԿԱՍԵՑՈՒՄԸ, ՄԵՐԺՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄԸ	18
6. ԳԼՈՒԽ 6. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ	20
7. ԳԼՈՒԽ 7. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ.....	20
8. ԳԼՈՒԽ 9. ՓԼ/ԱՖ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԴԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ՀԵՏ.....	21
9. ԳԼՈՒԽ 8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	21

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

- 1.2. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի» քաղաքականությունը (այսուհետ՝ «**Քաղաքականություն**») սահմանում է «ԱԿՏԻՆԱ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ ընկերության (այսուհետ՝ «**Ընկերություն**») փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (այսուհետ՝ **ՓԼ/ԱՖ**) դեմ պայքարի, զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման (**ՉՈՉՏՖ**) դեմ պայքարի ոլորտում ներքին հսկողության նպատակները, խնդիրները, սկզբունքները, հիմնական գործառույթները և իրականացման մոտեցումները:
- 1.3. ՓԼ/ԱՖ քաղաքականությունը մշակված է «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «**Օրենք**»), դրա հիման վրա ընդունված ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ նաև՝ «**ՀՀ ԿԲ կամ Լիազոր մարմին**») նորմատիվ իրավական ակտերի և ՖԱԹՖ ստանդարտների, միջազգային լավագույն փորձի և Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:
- 1.4. Օրենքով և ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ՓԼ/ԱՖ/ՉՈՉՏՖ կանխարգելման գործառույթները Ընկերությունում իրականացվում են ներքին դիտարկումների մարմնի կողմից, որն անկախ է և ենթարկվում է (հաշվետու է) Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (կամ միակ մասնակցին):
- 1.5. Քաղաքականությունը գործում է Ընկերության ողջ համակարգում, նրանում առկա դրույթները տարածվում են Ընկերության կառավարման բոլոր մարմինների, կառուցվածքային ստորաբաժանումների, դրանց ղեկավարների և աշխատակիցների վրա: Ընկերության բոլոր աշխատակիցները՝ անկախ զբաղեցրած պաշտոնից, պետք է հետևողական լինեն Քաղաքականությամբ սահմանված սկզբունքներին և դրսևորեն իրենց ազնիվ, պատասխանատու, գործարար էթիկայի սովորույթներին համապատասխան բոլոր փոխհարաբերություններում՝ հաճախորդների, մրցակիցների, գործընկերների, Ընկերության բաժնետերերի, պետական, վերահսկող մարմինների հետ և միմյանց միջև:
- 1.6. Սույն Քաղաքականության նպատակներն են՝
 - 1.6.1. ՓԼ/ԱՖ/ՉՈՉՏՖ դեմ պայքարի ոլորտում Ընկերության գործունեության համապատասխանեցումը Օրենքի դրույթներին, միջազգային կառույցների կողմից հրապարակված ստանդարտներին և պահանջներին,
 - 1.6.2. ՓԼ/ԱՖ/ՉՈՉՏՖ գործառնություններում Ընկերության ներգրավվածության բացառումը, Ընկերության գործարար համբավի պահպանումը ներքին և միջազգային գործարար հարաբերություններում,
 - 1.6.3. Ընկերության աշխատակիցների կողմից ՓԼ/ԱՖ/ՉՈՉՏՖ-ին առնչվող կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների բացահայտմանն ուղղված գործողությունների իրականացումը,
- 1.7. Սույն Քաղաքականության խնդիրն է, ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության պահանջներին համապատասխան, ապահովել Ընկերության աշխատակիցների կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի բնագավառում ընդհանուր ներքին հսկողություն իրականացումը և պահպանումը:
- 1.8. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նպատակով հսկողության հիմնական սկզբունքներն են՝

- 1.8.1. իրենց գործառույթների շրջանակում և անկախ զբաղեցրած պաշտոնից՝ Ընկերության բոլոր աշխատակիցների մասնակցությունը ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի նպատակով ներքին հսկողության իրականացման գործընթացին,
- 1.8.2. ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի նպատակով, Օրենքի պահանջներին համապատասխան, ներքին հսկողության իրականացման գործընթացում Ընկերության բոլոր աշխատակիցների պատասխանատվության անհատականացումը և վերջիններիս կողմից հիշատակված գործառույթությունների (գործառույթների) իրականացման շրջանակում և դրա նպատակով ստացվող տեղեկատվության գաղտնիության պահպանումը,
- 1.8.3. ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի նպատակով ներքին հսկողության իրականացման արդյունքում Ընկերության կողմից ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ Ընկերության հաճախորդներին, այլ անձանց իրազեկման անթույլատրելիությունը,
- 1.8.4. ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի նպատակով ներքին հսկողության կանոնների և մեթոդների սահմանումը,
 ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի նպատակով ներքին հսկողության միասնական մոտեցման կիրառումը և առանձին բիզնես գործընթացների իրականացման ժամանակ աշխատակիցների գործողությունների կանոնակարգման միջոցով դրանց ապահովումը:

1.2. ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ

- 1.9. Սույն Քաղաքականության, ինչպես նաև դրա հիման վրա ընդունված այլ ներքին իրավական ակտերում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

Ահաբեկչության հետ կապված անձ

Ցանկացած անհատ ահաբեկիչ, ներառյալ՝ ահաբեկչության կամ ահաբեկչության փորձի մեջ կասկածվող, մեղադրվող կամ դրանց համար դատապարտված անձ կամ ահաբեկչական կազմակերպություն, նրանց հետ փոխկապակցված անձ, նրանց կողմից կամ նրանց անունից կամ նրանց ցուցումների ներքո գործող կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նրանց պատկանող կամ նրանց կողմից կառավարվող այլ անձ, որը ներառվել է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն կամ ՀՀ ԿԲ հրապարակված ցանկերում:

Քաղաքականության իմաստով սույն սահմանումը ներառում է նաև զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց:

Ահաբեկչության ֆինանսավորում (ԱՖ)

Գույքի ուղղակի կամ անուղղակի, ցանկացած եղանակով տրամադրումը կամ հավաքագրումը՝ գիտակցելով, որ այն ամբողջությամբ կամ մասամբ պետք է օգտագործվի կամ կարող է օգտագործվել ահաբեկչության կամ պատանդ վերցնելու/պահելու համար կամ ահաբեկչական կազմակերպության կամ անհատ ահաբեկչի կողմից կամ ֆինանսական ծառայությունների մատուցումը՝ գիտակցելով, որ այդ ծառայություններն ուղղված են ահաբեկչության կատարմանը կամ պատանդ վերցնելուն/պահելուն կամ դրանց արդյունքներն օգտագործվելու են ահաբեկչական

**Առանց առերես
շփման գործարքը,
գործարար
հարաբերությունը**

**Ավագ
ղեկավարություն**

**Բարձր կոռուպցիոն
ռիսկ ունեցող երկիր**

**Բարձր ռիսկի
չափանիշ**

**Գործարար
հարաբերություն**

Գործարք

**Գործարքի մյուս
կողմ**

**Գործարքի,
գործարար
հարաբերության
դադարեցում**

**Գործարքի,
գործարար
հարաբերության
իրականացման
մերժում**

**Գործարքի,
գործարար
հարաբերության**

կազմակերպության կամ անհատ ահաբեկիչ կողմից:

Հաճախորդի հետ հաստատված գործարար հարաբերություն, երբ գործարար հարաբերության հաստատման և գործարքի կատարման ողջ գործընթացը, այդ թվում՝ համապատասխան վճարումների իրականացումը տեղի է ունենում առանց առերես շփման, ներառյալ՝ առցանց հարթակներում:

Ընկերության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համար պատասխանատու միավորը, որն իրավասու է Ընկերության անունից ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցերով որոշումներ կայացնել և գործողություններ իրականացնել:

Երկիր, որտեղ գնահատվել է կոռուպցիայի բարձր մակարդակ համաձայն «Transparency International» կազմակերպության «Corruption Perceptions Index» դասակարգման և(կամ) միջազգային այլ կազմակերպության կողմից հրապարակված դասակարգման համաձայն:

Բարձր ռիսկի չափանիշը ՀՀ օրենսդրությամբ, ինչպես նաև Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված այնպիսի չափանիշ է, որը վկայում է ՓԼ/ԱՖ բարձր հավանականության մասին:

Ընկերության կողմից հաճախորդին մատուցվող պարբերական ծառայություններն են, որոնք չեն սահմանափակվում մեկ կամ մի քանի միանգամյա գործարքներով:

Ընկերության և հաճախորդի կամ լիազորված անձի միջև, ինչպես նաև հաճախորդի կամ լիազորված անձի և այլ անձի միջև գործարքն է, որը կատարվում է Ընկերության միջոցով կամ հանդիսանում է հաշվետվություն տրամադրող անձի ուսումնասիրության/դիտարկման առարկա: Գործարք կարող է համարվել նաև որոշակի գործարքի հիման վրա կամ դրա արդյունքում իրավունքներ և պարտականություններ առաջացնող, փոփոխող կամ դադարեցնող յուրաքանչյուր գործողություն:

Հաճախորդի կողմից իրականացվող գործարքի այլ մասնակից, որը տրամադրում (փոխանցում) է կամ որին հասցեագրվում է գործարքից բխող գույքը:

Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության իրականացման ընդհատում:

Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման համար նախատեսված գործողությունների չիրականացում:

Կասկածելի գործարքի և/կամ գործարար հարաբերության առարկա գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելք:

կասեցում

Գույք

Գույքի սառեցում

**Չանգվածային
ոչնչացման զենքի
տարածման
ֆինանսավորումը
(ՀՈՀՏՖ)**

**Ընկերության
կառավարման
մարմին**

Իրական շահառու

ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ ցանկացած տեսակի նյութական բարիքներ, քաղաքացիական իրավունքի շարժական կամ անշարժ օբյեկտներ, ներառյալ՝ ֆինանսական (դրամական) միջոցներ, արժեթղթեր և գույքային իրավունքներ, գույքային իրավունքներ կամ շահերը հավաստող փաստաթղթեր կամ այլ միջոցներ, գույքից ստացված կամ դրա նկատմամբ հաշվեգրվող տոկոսներ, շահութաբաժիններ կամ այլ եկամուտներ, ինչպես նաև հարակից և արտոնագրային իրավունքներ:

Ահաբեկչության հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքի փաստացի և/կամ իրավաբանական շարժի անորոշ ժամկետով արգելք, այդ թվում՝ այդ գույքի ուղղակի կամ անուղղակի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման արգելք, ինչպես նաև որևէ գործարար հարաբերության (ներառյալ՝ ֆինանսական ծառայությունների) կամ միանգամյա գործարքների հաստատման կամ իրականացման արգելք:

Գույքի տրամադրումը կամ հավաքումն է կամ ֆինանսական ծառայությունների մատուցումը զանգվածային ոչնչացման զենքի տարածման (քիմիական, կենսաբանական, միջուկային կամ միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման այլ տեսակի զենք, ինչպես նաև դրանց փոխադրման հատուկ միջոցներ ստեղծելը, արտադրելը, ձեռք բերելը, մշակելը, տիրապետելը, փոխադրելը կամ իրացնելը, միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման զենքի փոխադրման հատուկ միջոցներ օգտագործելը, միջուկային զենքի չտիրապետող պետության հումքային կամ հատուկ տրոհվող նյութեր հանձնելը, միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման զենք կամ դրա արտադրության համար անհրաժեշտ քաղադրամասեր տրամադրելը) կամ ՀՀ միջազգային պայմանագրով արգելված զանգվածային ոչնչացման զենքի կիրառման կամ փորձարկման նպատակով:

Գործադիր տնօրեն, Ընդհանուր Ժողով:

Ֆիզիկական անձ, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և/կամ որը փաստացի վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կատարվում է կամ գործարար հարաբերությունը հաստատվում է:

Իրավաբանական անձի (բացառությամբ տրաստի կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորման) իրական շահառու է համարվում նաև այն ֆիզիկական անձը, որը՝

**Իրավաբանական
անձ**

- ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնետոմսերի, փայերի) 20 (քսան) և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,
- տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է փաստացի վերահսկողություն այլ միջոցներով,
- հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ սույն սահմանման վերը նշված կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ:

ՀՀ և/կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն/հիմնարկ, ինչպես նաև օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող իրավաբանական կազմավորում:

Լիազորված անձ

Հաճախորդի հանձնարարությամբ և հաճախորդի անունից գործարքի կատարման կամ գործարար հարաբերությունում որոշակի իրավաբանական կամ փաստացի գործողություններ իրականացման լիազորություն ունեցող, այդ թվում՝ լիազորագրով կամ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքով հաճախորդի կողմից տված լիազորությունների հիման վրա ներկայացուցչություն իրականացնող անձ:

**Կասկածելի
գործարք կամ
գործարար
հարաբերություն**

Այն գործարքը կամ գործարար հարաբերությունն է, այդ թվում՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձը, որի դեպքում կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ կամ օգտագործվել է կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից.:

Կեղծ («շել») բանկ

Բանկ, որը հիմնադրված, գրանցված, լիցենզավորված կամ այլ կերպ ինկորպորացված լինելով որևէ երկրում, իրականում դրա տարածքում չի կառավարվում կամ չունի փաստացի գտնվելու կամ գործունեության վայր, և որը փոխկապակցված չէ արդյունավետ համախմբված վերահսկողության ենթակա, կարգավորվող գործունեություն իրականացնող ֆինանսական հաստատությունների որևէ խմբի հետ

**Կենսական շահերի
կենտրոն**

Վայր, որտեղ կենտրոնացած են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան կամ տնտեսական շահը կարող

Հաճախորդ

**Հաճախորդի
գործարար
բնութագիր**

**Հաճախորդի
հավելյալ
ուսումնասիրություն**

**Հաճախորդի
պատշաճ
ուսումնասիրություն
(ՀՊՈՒ)**

է դրսևորվել այն վայրում, որտեղ գտնվում է անձի բնակելի տունը (բնակարանը), որտեղ բնակվում է անձը և (կամ) նրա ընտանիքը, որտեղ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը կամ հիմնական տնտեսական (մասնագիտական) գործունեության իրականացման վայրը:

Ընկերության հետ գործարար հարաբերություն հաստատող կամ այդպիսի հարաբերությունների մեջ գտնվող անձ, ինչպես նաև անձ, որը Ընկերությանն առաջարկում է կատարել կամ կատարում է միանգամյա գործարք:

Հաճախորդի գործունեության բնույթի, ազդեցության ու նշանակության, գործարար հարաբերությունների և միանգամյա գործարքների առկա ու ակնկալվող շարժի, ծավալների և ոլորտների, լիազորված անձանց և իրական շահառուների առկայության, ինքնության ու փոխկապակցվածության բնույթի, ինչպես նաև հաճախորդի գործունեությանը վերաբերող այլ փաստերի և հանգամանքների վերաբերյալ Ընկերության տեղեկությունների (պատկերացումների) ամբողջություն:

Ընկերության կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի ընդլայնված կիրառում, որի դեպքում, ի լրումն հաճախորդի պատշաճ ուսումնասիրությամբ սահմանված գործողությունների, անհրաժեշտ է նաև առնվազն.

1. ստանալ ավագ ղեկավարության հավանությունը՝ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելուց առաջ, գործարար հարաբերությունը շարունակելու համար, ինչպես նաև այն դեպքերում, երբ հետագայում պարզվում է, որ հաճախորդը կամ իրական շահառուն բնութագրվում է բարձր ռիսկի չափանիշով, կամ գործարքը կամ գործարար հարաբերությունը ներառում են այդպիսի չափանիշ,
2. ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ հաճախորդի, ինչպես նաև ՔԱՈՒԱ հանդիսացող իրական շահառուի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը պարզելու համար,
3. հնարավորին չափ մանրամասն ուսումնասիրել գործարքի կամ գործարար հարաբերության նախապայմանները և նպատակը,
4. ՔԱՈՒԱ դեպքում իրականացնել ընթացիկ հավելյալ դիտարկում:

Ընկերության կողմից հաճախորդի վերաբերյալ պատշաճ պատկերացում կազմելու նպատակով նրա ինքնության և գործարար բնութագրի վերաբերյալ ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառմամբ տեղեկություններ (ներառյալ՝ փաստաթղթեր) ձեռք բերելու ու վերլուծության գործընթաց, որը ներառում է՝

1. հաճախորդի (այդ թվում՝ լիազորված անձի և իրական շահառուի) նույնականացումը և ինքնության ստուգումը,
2. գործարքի կամ գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի պարզումը,

**Հաճախորդի
պարզեցված
ուսումնասիրություն**

**ՀՀ ԿԲ
Միջին ռիսկի
չափանիշ**

**Ներքին
դիտարկումների
մարմին (ՆԴՄ)**

**Չհամապատասխան
ող երկիր կամ
տարածք**

Ռիսկ

Տիպաբանություն

**Ցածր ռիսկի
չափանիշ**

**ՓԼ/ԱՖ
մնացորդային ռիսկ**

**ՓԼ/ԱՖ ռիսկի
ախորժակ**

3. գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրությունը

Ընկերության կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության գործընթացի սահմանափակ կիրառում, որի դեպքում նույնականացում և ինքնության ստուգում իրականացնելիս հավաքվում են հետևյալ տեղեկությունները՝

1. ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի տվյալները,
2. իրավաբանական անձի համար՝ անվանումը և անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համարը և այլն),
3. ԱԶ-ի համար՝ անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի տվյալները, անհատականացման համարը (պետական գրանցման, հաշվառման համարը և այլն), պետական մարմնի և տեղական ինքնակառավարման մարմնի համար՝ լրիվ պաշտոնական անվանումը:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Ռիսկը գնահատվում է միջին (ստանդարտ) բարձր կամ ցածր ռիսկի չափանիշների բացակայության դեպքում:

Ընկերության ՓԼ/ԱՖ կանխարգելմամբ և պատժամիջոցների համապատասխանությամբ զբաղվող ստորաբաժանում կամ աշխատակից կամ մասնագիտացված գործունեություն իրականացնող համապատասխան անձ:

ՀՀ ԿԲ-ի և ՖԱԹՖ-ի հրապարակած ցանկերին համապատասխան՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային պահանջները չկիրառող կամ ոչ պատշաճ կիրառող արտասահմանյան երկիր կամ տարածք:

ՓԼ/ԱՖ հավանականության մասին վկայող հանգամանք է, որը կարող է բնութագրվել ըստ երկրների կամ աշխարհագրական տեղակայման, հաճախորդների տեսակի, գործարքների կամ գործարար հարաբերությունների տեսակի, ծառայությունների տեսակի կամ այլ չափանիշների:

ՀՀ ԿԲ իրավական ակտերով, ինչպես նաև Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված՝ ՓԼ/ԱՖ և ԶՈՁՏՖ ուղղված գործողությունների և (կամ) քայլերի տրամաբանությունն ու հաջորդականությունը նկարագրող հնարավոր սխեմա

ՀՀ օրենսդրությամբ սահմանված այնպիսի չափանիշ է, որը վկայում է ՓԼ/ԱՖ ցածր հավանականության մասին:

Ընկերության գործունեությանը բնորոշ ՓԼ/ԱՖ ռիսկերի ռազմավարական վերլուծության վերջին բաղադրիչն է, որը ձևավորվում է ՓԼ/ԱՖ ներհատուկ ռիսկի և ներքին հսկողության համակարգի արդյունավետության գնահատման արդյունքում:

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի այն մակարդակը, որը կազմակերպությունը պատրաստ է ստանձնել իր նպատակներին հասնելու համար՝ մրկնույն ժամանակ պահպանելով օրենսդրական և ներքին

**Փողերի լվացում
(ՓԼ)**

իրավական բոլոր պահանջները:

Հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում), որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը (եթե հայտնի է, որ այդ գույքն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում) կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը (եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում):

**Քաղաքական
ազդեցություն
ունեցող անձ
(ՔԱՈՒԱ)**

Պետական, քաղաքական կամ հանրային բնույթի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունում նշանակալից գործառույթներ իրականացրած կամ իրականացնող անձն է (այդ թվում՝ նրա ընտանիքի անդամը կամ նրա հետ սերտորեն փոխկապակցված անձը): Ընդ որում, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը չի ընդգրկում միջին և ցածր դասի գործառույթներ իրականացնող անձանց:

Օրենք

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք:

ՖԱԹՖ

Միջկառավարական անկախ մարմին, որը մշակում է համաշխարհային ֆինանսական համակարգը ՓԼ/ԱՖ և ՁՈՁՏՖ-ից պաշտպանելու քաղաքականություններ և սատարում է դրանց իրագործմանը:

ՖԴԿ

Ֆինանսական դիտարկումների կենտրոն

ԱՌՆԶՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1.	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք
2.	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգ
3.	«Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման» քաղաքականություն
4.	«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման, զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի» Ընթացակարգ
5.	«Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման» ընթացակարգ
6.	ՓԼ/ԱՖ/ՁՈՁՏՖ դեմ պայքարի և միջազգային պատժամիջոցների ռիսկի ախորժակ

7. Ռիսկերի ռազմավարական վերլուծության իրականացման կարգ և մեթոդաբանություն
8. Ներքին դիտարկումների մարմնի տարեկան ծրագիր

ԳԼՈՒԽ 2. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿԶՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

2.1. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին և գործադիր մարմնին ներկայացվող նվազագույն պահանջներ

- 2.1.1. Ընկերությունում ՓԼ/ԱՖ/ԶՈԶ ՏՖ ռիսկերի կառավարման համակարգը հիմնված է հսկողության երեք գծերի կառավարման մոդելի վրա, որտեղ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասով Ընկերության հսկողական առաջին գծի գործառույթները վերապահված են հաճախորդին սպասարկող ստորաբաժանման աշխատակիցներին (այսուհետ նաև՝ «ՍՍ աշխատակից(ներ) կամ ՍՍԱ»), հսկողական երկրորդ գծի գործառույթները՝ ներքին դիտարկումների մարմնին, իսկ երրորդ գծի գործառույթները՝ ներքին աուդիտին:
- 2.1.2. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը (կամ միակ մասնակիցը) պատասխանատու է ՓԼ/ԱՖ/ԶՈԶՏՖ դեմ պայքարի արդյունավետ ներքին համակարգի ձևավորման համար, ապահովում է դրա ընթացիկ աշխատանքն ու վերահսկողությունը:
- 2.1.3. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը (կամ միակ մասնակիցը) ՓԼ/ԱՖ/ԶՈԶՏՖ դեմ պայքարի բնագավառում իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները.
- 2.1.3.1. Հաստատում է Ընկերության ՓԼ/ԱՖ/ԶՈԶՏՖ դեմ պայքարի ոլորտին առնչվող ներքին իրավական ակտերը:
- 2.1.3.2. Հաստատում է Ընկերության ներքին դիտարկումների մարմնի տարեկան աշխատանքային ծրագիրը, քննարկում և հաստատում է այդ ծրագրի կատարման հաշվետվությունները, հսկողություն է սահմանում այդ ծրագրերի իրագործման նկատմամբ:
- 2.1.3.3. Իրականացնում է ՆԴՄ-ի կողմից պարբերաբար վերանայվող ՓԼ/ԱՖ/ԶՈԶՏՖ դեմ պայքարի բնագավառում ռիսկերի սահմանման, գնահատման, ուսումնասիրության նպատակով անհրաժեշտ միջոցառումների կատարման վերահսկողությունը:
- 2.1.3.4. Իրականացնում է Ընկերության գործադիր մարմնի կողմից ՓԼ/ԱՖ/ԶՈԶՏՖ դեմ պայքարի նպատակով ներքին հսկողության համապատասխան համակարգի ներդրման և ապահովման վերահսկողությունը և այդ համակարգի արդյունավետության ուսումնասիրությունը:
- 2.1.3.5. Քննարկում և հաստատում է ՓԼ/ԱՖ/ԶՈԶՏՖ դեմ պայքարի կանոնակարգման ոլորտում աուդիտորական կամ այլ ստուգմամբ (ուսումնասիրությամբ) բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները, տալիս թերությունների վերացմանն ուղղված հանձնարարականներ և վերահսկում է դրանց կատարման գործընթացը:
- 2.1.3.6. Նվազագույնը կիսամյակային պարբերականությամբ ստանում, քննարկում և հաստատում է ՆԴՄ-ի կողմից ներկայացվող հաշվետվությունները:
- 2.1.3.7. Համաձայնություն է տալիս գործադիր մարմնի կողմից ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի նշանակմանը:

- 2.1.3.8. Իրականացնում է Օրենքով, սույն Քաղաքականությամբ և Օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:
- 2.1.4. Ընկերության գործադիր մարմինը ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի բնագավառում իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները.
- 2.1.4.1. Ապահովում է Ընկերության մասնակիցների ժողովի կողմից հաստատված ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի բնագավառում ռազմավարության և քաղաքականության իրականացումը:
- 2.1.4.2. Ապահովում է Ընկերության ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի բնագավառում ռիսկերի սահմանման, գնահատման, ուսումնասիրության և վերահսկողության գծով ներքին գործընթացների ներդրումն ու իրականացումը:
- 2.1.4.3. Ապահովում է Օրենքի և սույն Քաղաքականության հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի ամբողջական և արդյունավետ կիրառումը և հսկողություն է իրականացնում դրա նկատմամբ:
- 2.1.4.4. Ապահովում է Ընկերության աշխատակիցների ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի ոլորտում պատշաճ ուսուցումը:
- 2.1.4.5. Պատասխանատվություն է կրում Ընկերության մասնակիցների ժողովի կողմից հաստատված ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի քաղաքականության և գործընթացի ներդրման, ինչպես նաև դրանց ընթացիկ արդյունավետ իրականացման համար:
- 2.1.4.6. Իրականացնում է ՆԴՄ կողմից իրականացված ուսումնասիրությունների, ներառյալ աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները:
- 2.1.4.7. Ապահովում է ներքին դիտարկումների մարմնի անհրաժեշտ նյութատեխնիկական հագեցվածությունը:
- 2.1.4.8. Իրականացնում է Օրենքով, սույն Քաղաքականությամբ և ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող այլ իրավական ակտերով սահմանված գործառույթներ:

2.2. Ներքին դիտարկումների մարմնի պարտականություններն ու լիազորությունները, ՆԴՄ ներկայացվող պահանջները

- 2.2.1. Ընկերությունում ներքին դիտարկումների մարմնի աշխատանքն ուղղված է ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ կանխարգելմանը, այդ թվում՝
- 2.2.1.1. հաճախորդների նույնականացման, պատշաճ ուսումնասիրության և տվյալների թարմացման մեխանիզմների ներդրմանը, ընթացիկ ուսումնասիրությունների, գործարքների մոնիթորինգների և ստուգումների իրականացմանը,
- 2.2.1.2. ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի ռիսկերի վրա հիմնված համակարգի ներդրմանը և կիրառմանը,
- 2.2.1.3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված տեղեկությունների և հաշվետվությունների ներկայացմանը,
- 2.2.1.4. ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի կազմակերպման համար անհրաժեշտ տեղեկությունների և փաստաթղթերի պահպանման կազմակերպմանը,
- 2.2.1.5. ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով Ընկերության աշխատակազմի ուսուցման կազմակերպմանը,

- 2.2.2. Ընկերությունում ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի համակարգի ներդնումը (այդ թվում՝ ներքին իրավական ակտերի մշակումը, վերանայումը և Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (կամ միակ մասնակցին) և գործադիր մարմնի հաստատման ներկայացումը) և վերահսկողությունն իրականացվում է ՆԴՄ-ի կողմից, որն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, միջազգային ստանդարտներով և պահանջներով, Ընկերության կանոնադրությամբ, սույն Քաղաքականությամբ, Ընկերության ներքին իրավական ակտերով, Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի (կամ միակ մասնակցի) որոշումներով, հանձնարարականներով, գործադիր մարմնի հրամաններով ու կարգադրություններով:
- 2.2.3. ՆԴՄ-ի ղեկավարը և աշխատակիցները, Քաղաքականությամբ և դրա հիման վրա ընդունված ներքին իրավական ակտերով սահմանված գործառույթներն իրականացնելիս, անկախ են և ունենան **ավագ ղեկավարության** կարգավիճակ:
- 2.2.4. ՆԴՄ-ի ղեկավարն ու աշխատակիցներն իրավունք ունեն Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (կամ միակ մասնակցին) անմիջականորեն ներկայացնելու Ընկերության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ծագած խնդիրները, ինչպես նաև մասնակցելու մասնակիցների ընդհանուր ժողովի (կամ միակ մասնակցի) և գործադիր մարմնի կողմից ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարին առնչվող հարցերի քննարկմանը:
- 2.2.5. ՆԴՄ-ի ղեկավարին ու աշխատակիցներին ուղղակիորեն և անմիջապես հասանելի են Ընկերության կողմից ձեռքբերվող ու պահպանվող ՀՀ օրենսդրությամբ և Քաղաքականությամբ սահմանված տեղեկությունները՝ այդ թվում՝ հաճախորդների հաշիվներին և կատարված գործարքներին վերաբերող բոլոր փաստաթղթերը:
- 2.2.6. ՆԴՄ-ի ղեկավարն ու աշխատակիցները իրավունք ունեն գործարքների կամ գործարար հարաբերությունների, ինչպես նաև հաճախորդների, լիազորված անձանց և իրական շահառուների վերաբերյալ պարզաբանումներ պահանջել Ընկերության ցանկացած աշխատակցից:
- 2.2.7. ՆԴՄ-ն՝
- 2.2.7.1. իրականացնում է հաճախորդի և գործարքի կամ գործարար հարաբերության ռիսկի գնահատում,
 - 2.2.7.2. կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության բացահայտման նպատակով իրականացնում է վերլուծություններ, պահպանում է դրանց արդյունքները,
 - 2.2.7.3. ապահովում է Ընկերության անունից ՀՀ ԿԲ ներկայացվող պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների, կասկածելի գործարքների կամ գործարար հարաբերությունների գծով հաշվետվությունների ներկայացումը,
 - 2.2.7.4. տրամադրում է խորհրդատվություն և օժանդակում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (կամ միակ մասնակցին) և գործադիր մարմնին՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման հետ կապված իրենց գործառույթները կատարելու հարցերում,
 - 2.2.7.5. իրականացնում է ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի ոլորտում Ընկերության աշխատակիցների ուսուցում (ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի օրենսդրություն, առնչվող Ընկերության ներքին իրավական ակտեր, գործնական օրինակներ),
 - 2.2.7.6. իրականացնում է Ընկերությունում նոր պրոդուկտների, գործող պրոդուկտների նոր ուղիների գործարկման, ֆինանսական գործիքների, գործընթացների ներդրման և/կամ դրանց էական փոփոխությունների դեպքում ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ ռիսկերի գնահատում, ընդ որում՝ սույն կետով սահմանված ռիսկերը բացահայտվում և գնահատվում են մինչև ծառայությունների նոր տեսակների մատուցումը կամ դրանց

մատուցման եղանակների գործարկումը կամ նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառումը:

- 2.2.7.7. Պարբերաբար, բայց ոչ ուշ, քան կիսամյակը մեկ անգամ ուսումնասիրում է կատարած գործարքների և հաստատված գործարար հարաբերությունների, Ընկերության աշխատակիցների գործողությունների համապատասխանությունն Օրենքին, Քաղաքականությանը և դրանց հիման վրա ընդունված Ընկերության ներքին իրավական ակտերին: Ուսումնասիրության արդյունքների, ինչպես նաև ՀՀ ԿԲ կողմից առաջադրված այլ հարցերի վերաբերյալ ՆԴՄ-ն հաշվետվություն է ներկայացնում գործադիր մարմնին և Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (կամ միակ մասնակցին):
- 2.2.8. ՆԴՄ-ն վերջնական որոշում է կայացնում գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցնելու վերաբերյալ, ինչպես նաև ապահովում ՀՀ ԿԲ-ին Օրենքով և Քաղաքականությամբ սահմանված հաշվետվությունների տրամադրումը և Ընկերության կողմից ընդունված այլ ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառույթների իրականացումը:
- 2.2.9. ՆԴՄ-ն գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցնելու վերաբերյալ իր կայացրած որոշման մասին տեղեկացնում է գործադիր մարմնին և Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (կամ միակ մասնակցին), կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունը ՀՀ ԿԲ-ին տրամադրելուց հետո:
- 2.2.10. ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ կանխարգելումը Ընկերության յուրաքանչյուր աշխատակցի պարտականությունն է և Ընկերության բոլոր աշխատակիցները իրենց գործունեության ընթացքում հաճախորդի, գործակալի, լիազոր անձի կամ գործարար հարաբերության մեջ ներգրավված ցանկացացած երրորդ անձի կողմից ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ կասկածելի գործարքների առկայության մասին պարտավոր են անհապաղ տեղեկացնել ՆԴՄ-ին:
- 2.2.11. ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ կանխարգելմանը վերաբերող ՆԴՄ-ի ղեկավարի կողմից ուղարկվող գրությունները, հանձնարարականները և կարգադրությունները ենթակա են պարտադիր կատարման Ընկերության բոլոր աշխատակիցների կողմից, իսկ վերջինիս վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է պահպանման առնվազն 5 (հինգ) տարի ժամկետով՝ Ընկերության ներքին իրավական ակտերով ավելի երկար ժամկետ սահմանված չլինելու դեպքում:
- 2.2.12. ՆԴՄ ղեկավար կարող է նշանակվել անձ, որը համապատասխանում է ինչպես ՀՀ ԿԲԻՍ 2014 թ. հոկտեմբերի 7-ի թիվ 279-Ն որոշմամբ հաստատված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգով հաստատված նվազագույն չափանիշներին, այնպես էլ հետևյալ չափանիշներին.
- 2.2.12.1. ունի բարձրագույն կրթություն և միջազգային ճանաչում ունեցող մասնագիտական (ֆինանսական ոլորտի) որակավորման վկայական,
- 2.2.12.2. ունի ՓԼ/ԱՖ /ԶՈՂՏՖ դեմ պայքարի աշխատանքի առնվազն 1 (մեկ) տարվա աշխատանքային փորձ կամ բանկային/ներդրումային գործառնությունների իրականացման հետ կապված կառավարման առնվազն 5 (հինգ) տարվա փորձ,
- 2.2.12.3. տիրապետում է ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի վերաբերյալ ՀՀ օրենսդրությանը և նորմատիվ այլ իրավական ակտերին, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի բնագավառում միջազգային ստանդարտներին և ներքին հսկողության կանոններին,

- 2.2.12.4. ունի ՖԱԹՖ հանձնարարականների, ինչպես նաև ՓԼ/ԱՖ/ԶՈՁՏՖ դեմ պայքարի ռիսկերի գնահատման բնագավառում միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացվող սկզբունքների գիտելիքներ, միջազգային որակավորումը դիտվում է որպես առավելություն:
- 2.2.12.5. Ազատ հաղորդակցվում է հայերեն և ռուսերեն լեզուներով, տիրապետում է անգլերեն լեզվին:
- 2.2.13. Ներքին դիտարկումների մարմինը ոչ ուշ քան կիսամյակը մեկ անգամ, կիսամյակին հաջորդող երկրորդ ամսվա 20-ը (եթե այլ բան նախատեսված չէ Ընկերության ներքին իրավական ակտերով և/կամ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի (միակ մասնակցի) պահանջով) կազմում և Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (միակ մասնակցին) է ներկայացնում Օրենքով և ներքին իրավական ակտերով սահմանված հաշվետվությունները:
- 2.2.14. Ներքին դիտարկումների մարմնի կողմից Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (միակ մասնակցին) ներկայացվող կիսամյակային հերթական հաշվետվությունը նվազագույնը ներառում է.
- 2.2.14.1. պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների թիվը,
 - 2.2.14.2. կասկածելի գործարքների (գործարար հարաբերությունների) թիվն ու համառոտ նկարագրությունը,
 - 2.2.14.3. այն գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և ամփոփ նկարագրությունը, որոնց վերաբերյալ իրականացվել են վերլուծություններ, սակայն չեն ներկայացվել որպես կասկածելի գործարքներ կամ գործարար հարաբերություններ,
 - 2.2.14.4. կասեցված կամ իրականացումը մերժված գործարար հարաբերությունների և գործարքների թիվը և համառոտ նկարագրությունը,
 - 2.2.14.5. կասեցված գործարքների արժեքը,
 - 2.2.14.6. սառեցված ֆինանսական միջոցների չափը,
 - 2.2.14.7. «Միջազգային պատժամիջոցների համապատասխանության և Միջազգային պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման» քաղաքականությամբ նախատեսված տեղեկատվությունը,
 - 2.2.14.8. Ներքին դիտարկումների մարմնի տարեկան ծրագրի կատարման (կատարողականի) վերաբերյալ տեղեկատվություն,
 - 2.2.14.9. Ռիսկ ախորժակի նկատմամբ իրականացված հսկողության և դիտանցման արդյունքները,
 - 2.2.14.10. ՓԼ/ԱՖ/ԶՈՁՏՖ դեմ պայքարին առնչվող այլ հարցեր և տեղեկություններ,
 - 2.2.14.11. Ընկերության Ընդհանուր ժողովի կողմից պահանջվող այլ տեղեկատվություն:

ԳԼՈՒԽ 3. ՌԻՍԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄ ԵՎ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- 3.1. Ընկերությունում ՓԼ/ԱՖ/ԶՈՁՏՖ ռիսկերի կառավարման համակարգի համապարփակ ներկայացման նպատակով Քաղաքականությամբ սահմանվում են Ընկերության ՓԼ/ԱՖ/ԶՈՁՏՖ դեմ պայքարի ռիսկի ախորժակը և ՓԼ/ԱՖ/ԶՈՁՏՖ ռիսկերի զսպման հիմնական սկզբունքները: ՓԼ/ԱՖ/ԶՈՁՏՖ ռիսկի կառավարման մանրամասն գործընթացները, գործիքները, ինչպես նաև դրանցից բխող այլ խնդիրները նկարագրվում են Ընկերության այլ ներքին իրավական ակտերով (*«Փողերի լվացման և ահաբեկչության*

Ֆինանսավորման, զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի» Ընթացակարգ):

- 3.2. Ընկերության ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի ռիսկի ակտորժակը սահմանվում է հաշվի առնելով այն միջավայրը, որտեղ Ընկերությունը գործունեություն է ծավալում, դրանից բխող խոցելիություններն ու սպառնալիքները, Ընկերության ՓԼ/ԱՖ/ԶՈՂ ՏՖ դեմ պայքարի ներքին հսկողության մակարդակը և կարողությունները, Ընկերության բիզնես նպատակները և երկրի ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ ռիսկերի ազգային գնահատման արդյունքները:
- 3.3. Ընկերությունը սահմանում է ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ դեմ պայքարի ռիսկի ակտորժակի որակական և քանակական չափանիշներ: Կախված սահմանված չափանիշներից՝ նախատեսվող գործարար հարաբերությունները և/կամ գործարքները կարող են Ընկերության ռիսկի ակտորժակից դուրս լինել, այսինքն՝ արգելվել, մտնել ռիսկի ակտորժակի մեջ, սակայն որոշ սահմանափակումներ ունենան (հնարավոր լինեն միայն որոշակի պայմանների կիրառման դեպքում) և դասակարգվել որպես բարձր ռիսկային հաճախորդներ:
- 3.4. Ընկերությունը մշտապես նպատակաուղղված է նվազեցնել ռիսկային հաճախորդների թիվը՝ հիմնվելով այդ հաճախորդների պատշաճ ուսումնասիրության վրա: Ընկերության ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ ռիսկի հանդուրժողականությունը (ռիսկի ակտորժակը) սահմանում է բարձր ռիսկային հաճախորդների քանակի վերին շեմը (տոկոսը):
- 3.5. Քաղաքականության հիման վրա ձևավորվում են Ընկերության ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ ռիսկերի կառավարման մեխանիզմները՝ նպատակ ունենալով ժամանակին բացահայտել, գնահատել և զսպել ՓԼ/ԱՖ հնարավոր և առկա ռիսկերը:
- 3.6. ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ հնարավոր և առկա ռիսկերի գնահատումն (ռիսկի ռազմավարական) իրականացվում է Ընկերության ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ ներհատուկ ռիսկի և դրա կառավարմանն ուղղված ներքին հսկողության համակարգի գնահատման հիման վրա, որի արդյունքում Ընկերությունը գնահատում է իր գործունեությանը բնորոշ ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ մնացորդային ռիսկը՝ նպատակ ունենալով տարանջատել ընդունելի և անընդունելի ռիսկերը և ներդնել ռիսկերի պատշաճ կառավարման համակարգ: ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ հնարավոր և առկա ռիսկերը վերանայվում են ոչ ուշ, քան տարին մեկ անգամ: Սույն կետով նախատեսված գնատահումն իրականացվում է Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և մեթոդաբանությամբ:
- 3.7. Ընկերությունը բացահայտում և գնահատում է ծառայությունների նոր տեսակների մատուցման կամ դրանց մատուցման եղանակների գործարկման, ինչպես նաև նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառման հետ կապված հնարավոր և առկա ռիսկերը: Ընդ որում՝ սույն կետով սահմանված ռիսկերը բացահայտվում և գնահատվում են մինչև ծառայությունների նոր տեսակների մատուցումը կամ դրանց մատուցման եղանակների գործարկումը կամ նոր կամ զարգացող տեխնոլոգիաների կիրառումը:
- 3.8. Ընկերությունը ՓԼ/ԱՖ ԶՈՂՏՖ ռիսկի մակարդակը որոշում է յուրաքանչյուր հաճախորդ համար: Ընկերության աշխատակիցներն իրականացնում են ռիսկի մակարդակի վերահսկողության, հայտնաբերման, գնահատման, ուսումնասիրության վերլուծության գործընթացներ, ինչպես նաև իրականացնում են ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ ռիսկի նվազեցման/կանխարգելման միջոցառումներ:
- 3.9. Ընկերության աշխատակիցների կողմից հաճախորդի ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ ռիսկի մակարդակի գնահատումը հիմնվում է հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների/տեղեկատվության, նրա գործունեության և հաճախորդի կողմից կատարվող ցանկացած գործարքների վերաբերյալ Ընկերության աշխատակիցների մոտ առկա փաստաթղթերի վերլուծության արդյունքի հիման վրա:

- 3.10. Ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով Ընկերությունում հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնելիս ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ ռիսկը գնահատվում է բարձր, միջին կամ ցածր՝ հիմք ընդունելով ստորև նշված բաղադրիչները.
 - 3.10.1. երկրի կամ աշխարհագրական տարածքի ռիսկ,
 - 3.10.2. գործարքի կամ գործարար հարաբերության ռիսկ,
 - 3.10.3. պրոդուկտի, ծառայության կամ մատուցման եղանակի ռիսկ:
- 3.11. Բարձր ռիսկային հաճախորդների նկատմամբ կիրառվում է հավելյալ ուսումնասիրություն, միջին ռիսկային հաճախորդների նկատմամբ՝ պատշաճ ուսումնասիրություն, իսկ ցածր ռիսկային հաճախորդների նկատմամբ կարող է կիրառվել պարզեցված ուսումնասիրություն:
- 3.12. Պարզեցված ուսումնասիրություն չի կարող իրականացվել գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիության դեպքում կամ ՓԼ/ԱՖ/ԶՈՂՏՖ բարձր ռիսկի չափանիշի առկայության դեպքում, բացառությամբ, երբ առկա է միջին կամ բարձր ռիսկի որևէ չափանիշ, սակայն կատարվում է ցածր ռիսկի գործարք, որը չի գերազանցում նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:
- 3.13. Հաճախորդի հետ գործարար հարաբերության ընթացքում ռիսկի որևէ նոր չափանիշ ի հայտ գալու դեպքում ՍՍ աշխատակիցը պետք է այդ մասին տեղեկացնի ՆԴՄ-ին՝ ստանալով ՆԴՄ-ի կարծիքը տվյալ ռիսկի վերանայման և նոր որոշված ռիսկին համապատասխան հաճախորդի պատշաճ ուսումնասիրության միջոցառումներ իրականացնելու նպատակով:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՊԱՏՇԱՃ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐ

- 4.1. Ընկերությունը հաճախորդի հետ գործարար հարաբերություն կարող է հաստատել միայն հաճախորդի նույնականացման համար Քաղաքականությամբ և Ընկերության այլ ներքին իրավական ակտերով սահմանված տեղեկությունները ստանալուց և հաճախորդի ինքնությունը ստուգելուց հետո, այդ թվում տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ նույնականացման միջոցով: Ընկերությունը կարող է նույնականացման համար պահանջվող տեղեկությունների հիման վրա հաճախորդի ինքնությունը ստուգել նաև գործարար հարաբերություն հաստատելու ընթացքում կամ դրանից հետո ողջամիտ, բայց ոչ ավելի, քան յոթնօրյա (7 օր) ժամկետում, եթե ռիսկն արդյունավետորեն կառավարվում է, և դա անհրաժեշտ է հաճախորդի հետ բնականոն գործարար հարաբերությունները չխափանելու նպատակով:
- 4.2. Ընկերությունը չի հաստատում կամ շարունակում գործարար հարաբերությունները այն օտարերկրյա անձանց հետ, որոնք չունենալով ՀՀ-ում որևէ տնտեսական և(կամ) անձնական շահ, չեն ներկայացնում ֆինանսական հոսքերի սպասարկումը հայաստանյան ֆինանսական համակարգի միջոցով կազմակերպելու տնտեսական կամ այլ իրավաչափ հիմնավորումները հավաստող ողջամիտ տեղեկություններ:
- 4.3. Ընկերությունը հաճախորդի ուսումնասիրությունը սկսում է գործարար հարաբերություններ հաստատելու նպատակով նրա՝ Ընկերությանը դիմելու պահից և շարունակում է մինչև հաճախորդի ու Ընկերության միջև պայմանագրային հարաբերությունների դադարեցումը:
- 4.4. Հաճախորդի ուսումնասիրությունը ներառում է հաճախորդի վերաբերյալ Ընկերության ունեցած տեղեկությունների հիման վրա հաճախորդի մասին տեղեկությունների հավաքագրում, վերլուծություն և գնահատում:

- 4.5. Ընկերությունը կարող է հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատել միայն հաճախորդի նույնականացման համար տեղեկությունները (ներառյալ՝ փաստաթղթերը), ստանալուց և հաճախորդի ինքնությունը ստուգելուց հետո:
- 4.6. Ընկերությունը պետք է պարզի, թե արդյո՞ք հաճախորդը հանդես է գալիս իր կամ այլ անձի անունից և (կամ) օգտին և քայլեր ձեռնարկի պարզելու և բացահայտելու հաճախորդի իրական շահառուին:
- 4.7. Հաճախորդների հավելյալ ուսումնասիրությունն իրականացվում է նվազագույնը հետևյալ դեպքերում՝
 - 4.7.1. հաճախորդի, իրական շահառուի կամ հաճախորդի լիազորված անձի հետ գործարար հարաբերություն հաստատելիս,
 - 4.7.2. երբ կասկածներ են առաջանում հաճախորդի նույնականացմանը վերաբերող նախկինում ձեռք բերված տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) հավաստիության կամ ամբողջականության վերաբերյալ,
 - 4.7.3. կասկածներ են առաջանում ՓԼ/ԱՖ տեսանկյունից:
- 4.8. Հաճախորդի ռիսկի ցածր մակարդակի գործոնների առկայության դեպքում Ընկերությունն իրականացնում է հաճախորդի գործարքների և գործարար հարաբերությունների պարզեցված ուսումնասիրություն:
- 4.9. Հաճախորդի գործարքների պարզեցված ուսումնասիրության գործընթացը չի կարող իրականացվել հաճախորդի գործարքներում և գործարար հարաբերություններում կասկածելիության կամ բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում:
- 4.10. Եթե հաճախորդի ռիսկը ոչ բարձր է և ոչ ցածր, ապա ռիսկի դասը գնահատվում է միջին:
- 4.11. Ընկերությունը, ռիսկի միջին մակարդակի հաճախորդների առկայության դեպքում, մշտապես իրականացնում է ռիսկի միջին մակարդակի հաճախորդների գործարքների և գործարար հարաբերությունների պատշաճ ուսումնասիրություն:
- 4.12. Բարձր ռիսկի գործոնների առկայության դեպքում Ընկերությունն իրականացնում է հաճախորդի գործարքների և գործարար հարաբերությունների հավելյալ ուսումնասիրություն: Հավելյալ ուսումնասիրություն անցկացվում է նաև այն դեպքերում, երբ գործարքի կամ գործարար հարաբերության ընթացքում բացահայտվում կամ ի հայտ է գալիս բարձր ռիսկի չափանիշ:
- 4.13. Բարձր ռիսկի չափանիշները, ի թիվս ՀՀ օրենսդրությամբ սահմանվածների, նկարագրված են Ընկերության այլ ներքին իրավական ակտով և Ընկերության Ռիսկ ակտորժակով:
- 4.14. Հաճախորդի և նրա կողմից կատարված գործարքների վերաբերյալ տեղեկությունները, ներառյալ՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները) թարմացվում են հետևյալ հաճախականությամբ՝
 - 4.14.1. ցածր ռիսկ՝ 2 տարին մեկ,
 - 4.14.2. միջին ռիսկ՝ տարին մեկ,
 - 4.14.3. բարձր ռիսկ՝ 6 ամիսը մեկ անգամ,
 - 4.14.4. քաղաքական ազդեցություն ունեցող անձ (ՔԱՌԻԱ)՝ 3 ամիսը մեկ անգամ:
- 4.15. Հաճախորդի նույնականացման և ինքնության ստուգման արդյունքում ձեռք բերված տեղեկությունների թարմացվում են ոչ ուշ, քան տարին մեկ անգամ:
- 4.16. Անձի քաղաքական ազդեցություն ունենալու փաստը որոշելու նպատակով Ընկերությունը կարող է իրականացնել քաղաքական ազդեցություն ունեցող անձանց մասին տեղեկատվության ուսումնասիրում հրապարակային աղբյուրներից և տվյալների մասնավոր բազաներից:

**ԳԼՈՒԽ 5. ԳՈՐԾԱՐՔԸ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՍԿԱԾԵԼԻ ՈՐԱԿՈՒՄԸ,
ԴՐԱՆՑ ԿԱՍԵՑՈՒՄԸ, ՄԵՐԺՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ, ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄԸ**

- 5.1. Գործարքը կարող է կասկածելի որակվել ինչպես գործարքը կատարելու (հաճախորդին սպասարկելու) ժամանակ, այնպես էլ՝ ընթացիկ պատշաճ ուսումնասիրության շրջանակներում հաճախորդների գործարքների դիտանցման ընթացքում:
- 5.2. Գործարքը կամ գործարար հարաբերությունը, այդ թվում՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձը, պետք է որակվի որպես կասկածելի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն տրամադրվի ՀՀ ԿԲ, եթե կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գործարքում կամ գործարար հարաբերությունում ներգրավված գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ, կամ օգտագործվել է, կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից:
- 5.3. Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ ՀՀ ԿԲ-ին հաշվետվություն տրամադրելու վերաբերյալ հարցը դիտարկվում է հետևյալ դեպքերում.
 - 5.3.1. երբ դիտարկվող իրավիճակն ամբողջությամբ կամ մասամբ համապատասխանում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշներին կամ տիպաբանություններին, կամ
 - 5.3.2. ակնհայտ է դառնում, որ թեև կնքված կամ առաջարկվող գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիությունը չի բխում կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության չափանիշներից կամ տիպաբանություններից, սակայն դրա կատարման տրամաբանությունը, շարժը (դինամիկան) կամ այլ հանգամանքները հիմք են տալիս ենթադրելու, որ այն կարող է իրականացվել ՓԼ/ԱՖ նպատակով:
- 5.4. Այն դեպքերում, եթե դիտարկման արդյունքում գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չի որակվել և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն ՀՀ ԿԲ-ին չի տրամադրվել, ապա գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չորակելու հիմնավորումները, կատարված եզրահանգումները, վերլուծության ընթացքը և արդյունքները Ընկերության կողմից փաստաթղթավորվում և պահպանվում են առնվազն 5 տարի՝ Ընկերության ներքին իրավական ակտերով ավելի երկար ժամկետ սահմանված չլինելու դեպքում:
- 5.5. ՆԴՄ-ն իրավունք ունի առավելագույնը 5 օրով, իսկ ՀՀ ԿԲ հանձնարարականի ստացման դեպքում՝ պարտավոր է 5 օրով կասեցնել գործարքը կամ գործարար հարաբերությունը՝ անմիջապես կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն տրամադրելով ՀՀ ԿԲ-ին:
- 5.6. Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին ՀՀ ԿԲ որոշումը պետք է կատարվի անմիջապես՝ այն Ընկերության կողմից ստանալուց հետո:
- 5.7. Ընկերության կամ ՀՀ ԿԲ-ի՝ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցնելու մասին որոշումը մինչև կասեցման ժամկետի ավարտը կարող է ուժը կորցրած ճանաչվել միայն ՀՀ ԿԲ-ի կողմից՝ վերջինիս նախաձեռնությամբ կամ Ընկերության միջնորդությամբ, եթե առկա չէ գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման հետագա անհրաժեշտություն:

- 5.8. Այն դեպքում, երբ ՀՀ ԿԲ-ի կողմից կասեցման երկարաձգման վերաբերյալ որոշումը չի տրամադրվել Ընկերությանը, կասեցումը համարվում է ուժը կորցրած:
- 5.9. Մինչև կասեցման վերացման մասին տեղեկության ստացումը ՍՍ աշխատակիցը աշխատակիցը իրավունք չունի կատարել համապատասխան գործարքը:
- 5.10. Գործարքի կատարումը կամ գործարար հարաբերության հաստատման մերժումն իրականացվում է հետևյալ դեպքերում.
- 5.10.1. ՀՀ ԿԲ-ի որոշմամբ սահմանված համապատասխան հանձնարարականների ստացման դեպքերում,
- 5.10.2. ՀՊՈՒ-ի անհնարինության դեպքում,
- 5.10.3. Անձանց միջազգային ատժամիջոցների ներքո գտնվելու դեպքերում, ընդ որում, այդ դեպքում հաճախորդների գործարքները կատարվում են հաշվի առնելով միջազգային պատժամիջոցների պահանջները, իսկ այդ պահանջները խախտելու դիսկրետ առկայության դեպքում՝ մերժվում են¹:
- 5.11. Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության դադարեցումն իրականացվում է հետևյալ դեպքերում.
- 5.11.1. Ընկերության հաճախորդի ընթացիկ պատշաճ ուսումնասիրության անհնարինության կամ ձախողման պարագայում:
- 5.12. Գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման մերժման կամ դադարեցման դեպքերում պետք է դիտարկել դրանց կասկածելի որակելու հարցը:
- 5.13. Ահաբեկչության հետ կապված անձանց կամ ի շահ նրանց ուղղակի կամ անուղղակի կերպով, ամբողջությամբ կամ համատեղ կարգով գույք, տնտեսական ռեսուրսներ կամ ֆինանսական կամ այլ հարակից ծառայություններ հասանելի դարձնելն արգելվում է:
- 5.14. ՄԱԿ անվտանգության խորհրդի բանաձևերով, դրանց համաձայն կամ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված ցանկերում ներառված՝ ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքը անմիջապես և առանց նշված անձանց նախապես տեղեկացնելու ենթակա է սառեցման: Ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերը հրապարակվում են ՀՀ ԿԲ-ի կողմից՝ իր ինտերնետային կայքում:
- 5.15. Ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց հասկացությանը համապատասխանող անձանց վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում Ընկերությունը պարտավոր է անմիջապես հայտնել ՀՀ ԿԲ:
- 5.16. Ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքը սառեցնելու դեպքում՝ գործարքը կամ գործարար հարաբերությունն անմիջապես որակվում է կասկածելի և ՀՀ ԿԲ-ին տրամադրվում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:
- 5.17. Ընկերության բոլոր աշխատակիցներին, անկախ զբաղեցրած պաշտոնից, արգելվում է որևէ կերպ հրապարակել կամ որևէ անձի հայտնի դարձնել հաճախորդի և(կամ) գործարքի վերաբերյալ ՀՀ ԿԲ-ին հաշվետվության կամ այլ տեղեկությունների տրամադրման փաստի մասին, այդ թվում՝ անձի գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու կամ սառեցնելու վերաբերյալ, ինչպես նաև հաճախորդի՝ «Սև ցուցակում» ներառված լինելու վերաբերյալ:

¹ Տե՛ս «միջազգային պատժամիջոցների շրջանցման դիսկի կառավարման» քաղաքականությունը:

ԳԼՈՒԽ 6. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

- 6.1. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի թեմաներով Ընկերության աշխատակիցների, այդ թվում Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի (կամ միակ մասնակցի), գործադիր մարմնի, Ներքին աուդիտի համար ուսուցումը կազմակերպվում է առնվազն տարին մեկ անգամ, իսկ նոր ընդունված աշխատակիցների համար՝ աշխատանքի ընդունումից հետո 3 ամսվա ընթացքում: Ուսուցման արդյունավետությունը գնահատելու նպատակով՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարին վերաբերող հարցեր են ընդգրկվում նոր և հին աշխատակիցների որակավորման ստուգման (ատեստավորման) հարցաշարերում:
- 6.2. ՆԴՄ-ի կողմից մշակվում է և ամեն տարի թարմացվում է Ընկերության աշխատակիցների ուսուցման ծրագիրը, որը պարտադիր ներառում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ՀՀ օրենսդրության փոփոխությունները, Ընկերությունում ներդրված կարգավորման ու դրա փոփոխությանը վերաբերող տեղեկատվությունը, ինչպես նաև սահմանվում է ուսուցման ժամանակացույցը, որը ՆԴՄ-ի տարեկան ծրագրի շրջանակներում ներկայացվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի (կամ միակ մասնակցի) հաստատմանը:
- 6.3. ՆԴՄ-ի կողմից կարող են կազմակերպվել նաև առանձին թեմատիկ, հատուկ դասընթացներ, թեստավորումներ և քննարկումներ:
- 6.4. Ընկերությունում իրականացրած ուսուցման նյութերը, դրանց մասնակցած աշխատակիցների տվյալները և մասնակցությունը հավաստող փաստաթղթերը պետք է հաշվառվեն և պահպանվեն առնվազն 5 (հինգ) տարի ժամկետով՝ Ընկերության ներքին իրավական ակտերով ավելի երկար ժամկետ սահմանված չլինելու դեպքում;

ԳԼՈՒԽ 7. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

- 7.1. Օրենքով և Քաղաքականությամբ սահմանված տեղեկությունները կարող են հավաքագրվել և պահպանվել թղթային և(կամ) էլեկտրոնային եղանակով:
- 7.2. Օրենքով և Քաղաքականությամբ պահանջվող, ներառյալ՝ ՀՊՈՒ-ի ընթացքում ձեռք բերված տեղեկությունները Ընկերությունում պահպանվում են՝ անկախ գործարքը կամ գործարար հարաբերության շարունակելու կամ դադարեցվելու հանգամանքից:
- 7.3. Տեղեկությունները հավաքագրվում են յուրաքանչյուր հաճախորդի մասով առանձնացված փաթեթով:
- 7.4. Ընկերությունն Օրենքով և Քաղաքականությամբ պահանջվող, ներառյալ՝ ՀՊՈՒ-ի ընթացքում ձեռք բերված տեղեկությունները պահպանում է գործարար հարաբերության ավարտից հետո կամ գործարքի կատարումից հետո առնվազն 5 (հինգ) տարվա ընթացքում, իսկ օրենսդրությամբ, Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված լինելու դեպքում՝ ավելի երկար ժամկետով:
- 7.5. Ընկերության աշխատակիցներին արգելվում է հեռացնել, կրճատել և/կամ քողարկել հաճախորդի և/կամ նրա կողմից կատարվող գործարքի վերաբերյալ որևէ տեղեկատվություն:

**ԳԼՈՒԽ 9. ՓԼ/ԱՖ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԴԵՐՆ ՈՒ
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ
ՄԱՐՄՆԻ ՀԵՏ**

- 8.1. Ընկերության եռաստիճան ներքին հսկողության լիարժեք մակարդակ ապահովելու նպատակով Ներքին աուդիտը, Օրենքով սահմանված կարգով, տարեկան առնվազն մեկ անգամ ստուգումներ է իրականացնում՝ հավաստիանալու, որ Ընկերության գործադիր ղեկավարն ու Ներքին դիտարկումների մարմինն ապահովում են Ընկերության գործունեության լիարժեք համապատասխանությունն Օրենքի, Լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերի, սույն Քաղաքականության և այլ ներքին իրավական ակտերի պահանջներին:
- 8.2. Ներքին աուդիտը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին (կամ միակ մասնակցին) (պատճենը՝ գործադիր ղեկավարին) հաշվետվություն է ներկայացնում ստուգումների արդյունքում ձևավորված իր գնահատականների և բացահայտումների վերաբերյալ, ներառյալ՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցերով աշխատակիցների ուսուցման ու վերապատրաստման համարժեքության և արդյունավետության վերաբերյալ իր եզրակացությունը:
- 8.3. Ներքին աուդիտը ցանկացած ստորաբաժանման ընթացիկ կամ պլանային ստուգման ընթացքում կասկածելի գործարքների կամ փողերի լվացման հավանական սխեմաների, Օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի հիման վրա (ներքին ու արտաքին) պահանջների խախտումների հայտնաբերման դեպքում, մինչև ստուգման արդյունքների վերաբերյալ փաստաթուղթը համապատասխան իրավասու մարմնին ներկայացնելը, այդ մասին պետք է տեղեկացնի Ներքին դիտարկումների մարմնին՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի անհրաժեշտ միջոցառումներն իրականացնելու նպատակով:

ԳԼՈՒԽ 8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 9.1. Տվյալ Քաղաքականությունը ենթակա է վերանայման ՀՀ օրենսդրության, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում ստանդարտների և պահանջների փոփոխման, ինչպես նաև այլ անհրաժեշտ դեպքերում:
- 9.2. Սույն Քաղաքականությանը պարտադիր կերպով պետք է ծանոթանան Ընկերության բոլոր աշխատակիցները (այդ թվում՝ նաև ղեկավարները):